ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

Posted on January 31, 2016 by Keghart

keghart.com

Category: Opinions

Դոկտ. ժիրայր Քոչարեան, Բեռլին, Պետական Ազատ Համալսարան

Գերմանական լրատուական միջոցների, մշակութային, գիտական և մարդու իրաւունքների բազմաթիւ միջոցառումների արձագանքը ցեղասպանութեան 100-րդ տարելիցին գերազանցեց Գերմանիայում ապրող հայերի սպասելիքները[1]: Խորհրդարանական բանավէճում բոլոր խմբակցութիւների ներկայացուցիչները այս տարուայ Ապրիլի (2015թ.) 24-ին ներկայացրեցին յուզիչ ճառեր: Յատկապէս տպաւորիչ էր Բունդեսթագի նախագահի՝ Պրոֆ. Լամեռթի (քրիստոնեայ-դեմոկրատական միաւորում, CDU) բացման ելոյթը, որը պարզ ու յստակ «1915-ի դէպքերը» ցեղասպանութիւն որակեց և դատապարտեց: Իմ կարծիքով այս որակական և քաղաքական ազդու դիրքորոշման մէջ խիստ կարեւոր էին հետեւեալ չորս գործօնները՝

ա) Կաթոլիկ եկեղեցու գլուխ՝ Պապ Ֆրանսիսքոսի 2015թ-ի ապրիլի 12-ի պատարագի ընթացքում արտայայտած օրինակելի և յստակ խօսքը
բ) գերմանական խորհրդարանական ընդդիմականների հաշուեյարդարը CSU-CDU իշխանութեան հետ
գ) գերմանական հասարակութեան մեջ պատմութեան գիտակցութեան զարգացումը և
դ) Էրդողանի Նէօ-օսմանական քաղաքականութեան ժխտումը ու Եւրոխորհրդարանի որոշումը:

Դոկտ. ժիրայր Քոչարեան, Բեռլին, Պետական Ազատ Համալսարան

Գերմանական լրատուական միջոցների, մշակութային, գիտական և մարդու իրաւունքների բազմաթիւ միջոցառումների արձագանքը ցեղասպանութեան 100-րդ տարելիցին գերազանցեց Գերմանիայում ապրող հայերի սպասելիքները[1]: Խորհրդարանական բանավէճում բոլոր խմբակցութիւների ներկայացուցիչները այս տարուայ Ապրիլի (2015թ.) 24-ին ներկայացրեցին յուզիչ ճառեր: Յատկապէս տպաւորիչ էր Բունդեսթագի նախագահի՝ Պրոֆ. Լամեռթի (քրիստոնեայ-դեմոկրատական միաւորում, CDU) բացման ելոյթը, որը պարզ ու յստակ «1915-ի դէպքերը» ցեղասպանութիւն որակեց և դատապարտեց: Իմ կարծիքով այս որակական և քաղաքական ազդու դիրքորոշման մէջ խիստ կարեւոր էին հետեւեալ չորս գործօնները՝

ա) Կաթոլիկ եկեղեցու գլուխ՝ Պապ Ֆրանսիսքոսի 2015թ-ի ապրիլի 12-ի պատարագի ընթացքում արտայայտած օրինակելի և յստակ խօսքը
բ) գերմանական խորհրդարանական ընդդիմականների հաշուեյարդարը CSU-CDU իշխանութեան հետ

գ) գերմանական հասարակութեան մեջ պատմութեան գիտակցութեան զարգացումը և
դ) Էրդողանի Նէօ-օսմանական քաղաքականութեան ժխտումը ու Եւրոխորհրդարանի որոշումը։

Հայկական միութիւն-կազմակերպութիւնների գործօնը նշանակալի վաստակ չունեցաւ, քանզի նրանք չունեն միջոցներ ազդելու Գերմանիայի քաղաքականութեան վրայ։ Բունդեսթագը 15 տարի է, ինչ առնչւում է հայոց ցեղասպանութեան խնդրին, այսինքն ստիպուած է տալ սահմանուած գնահատական՝ համաձայն ՄԱԿ-ի ցեղասպանութեան պայմանագրի։

Այս տարուայ (2015թ.) 24 Ապրիլին, 2005-ի բանաձեւի բարելաւմանն էին սպասում ոչ միայն Գերմանիայում ապրող հայերը, այլեւ ցեղասպանագէտները և մարդու իրաւունքների հարցերով զբաղուող անձինք։ Սակայն արտգործնախարարութեան, քանցլերի գրասենեակի, ինչպէս նաեւ իշխող մեծ խմբակցութիւնների ներկայացուցիչների պահանջով այս տարուայ սկզբին որոշուած նախագիծ-բանաձեւից «ցեղասպանութիւն» եզրը հանուեց։ Ընդդիմական ձախերը և կանաչները, ի պատասխան դրան, ներկայացրին իրենց սեփական բանաձեւը։ Հասարակութեան կարծիքի ճնշման ներքոյ և գուցէ նաև նկատի առնելով Գերմանիայի վարկը արտերկրում՝ ապրիլի 24-ից առաջ մեծ կոալիցիայի առաջարկի մէջ դարձեալ կարճաժամկէտ ներառուեց «ցեղասպանութիւն» եզրը, թէպէտեւ վերին աստիճանի խճճուած նախադասութեամբ՝ «Հայերի ճակատագիրը վառ օրինակ է, երբ խօսքը գնում է զանգուածային բնաջնջման, էթնիկ մաքրագործման, տեղահանութեան, անգամ ցեղասպանութեան պատմութեան մասին, որոնցով 20-րդ դարը սարսափելի եղանակով նշանաւորուած է»։

Գործադիր մարմնի ազդեցութիւնը օրէնսդիրի վրայ, որը անյարիր է ժողովրդավարական հիմունքներին, ցաւօք տխուր աւանդոյթ ունի Գերմանիայի հայ-թուրքական քաղաքականութիւնում։ Արդէն 1915թ-ին իշխանութեան վարչապետը՝ քանցլերը, վկայակոչելով գերմանա-օսմանական զինուորական դաշնակցութիւնը, արգելեց Թուրքիայի հայաջինջ քաղաքականութեան նկատմամբ որեւէ քննադատական կեցուածք։

Գերմանական մեղքի մասնաբաժնին վերաբերուող որեւէ ընդարձակ, գիտական և ճշգրիտ աշխատութիւն առ այսօր բացակայում է Գերմանիայում։ Ոչ մի պատմաբան, ոչ մի համալսարան չի անցկացրել ուսումնասիրման որեւէ ծրագիր։ Այս թեման երկար ժամանակ թողնուել էր լրագրողներին։ Սակայն, շարունակ աճող մի հասարակութիւնում, որտեղ հանցագործների իսլամ ժառանգորդները՝ թուրքերը և մերձաւոր-արևելեան քրիստոնեայ զոհերի սերունդները միասին են ապրում, գիտական և յիշողութեան անգործունէութեան քաղաքականութիւնը հանգեցնելու է ողբերգութեան։

Ապրիլի 24-ին Բունդեսթագում ներկայացուած ճառերի ցանկում պետութեան որեւէ

անդամ ելոյթ չունեցաւ: Այնտեղ նստած էր արտգործնախարար Ֆրանք-Վալթեր Շթայնմայերը կառավարական աթոռին և քարացած դէմքով հետեւում էր 100 տարի առաջ իրականացուած հայոց ցեղասպանութեան մասին քննարկումներին:

Շաբաթներ դրանից առաջ, նա դիմել էր ամեն միջոցի, որպէսզի ցեղասպանութիւն հասկացութիւնը չհնչի, նկատի առնելով Թուրքիայի հետ բարձր մակարդակի յարաբերութիւնները: Սակայն Դաշնային Հանրապետութեան նախագահը, Բունդեսթագի նախագահը, բազմաթիւ պատգամաւորներ և բոլոր խմբակցութիւնները արդէն դիրքաւորուել էին: Կատարուածը ցեղասպանութիւն էր, առանց այլեւայլի, Շթայնմայերի դէմքից երևում էր իրեն վիրաւորուած զգալը: «Ձախողումը նա անձնական ընդունեց»[2], դիպուկ ասում է Հենրի Մ. Բրոդերը:

Սկզբից եւեթ միշտ արտգործնախարարութիւնը և կամ արտգործնախարարը ունէին և ունեն հակահայ դիրքորոշում, անկախ կուսակցական պատկանելիութիւնից:

Գերմանա-Օսմանեան յարաբերութիւնը սերտանում է Helmut Karl Bernhard von Moltk-ի ժամանակաշրջանից, երբ նա 1836-1839թթ թրքական բանակի instrukteur-ն էր, որը և ընդլայնուեց տնտեսական, զինուորական, մշակութային և սոցիալական ոլորտներով:

Այս ժամանակամիջոցին էլ գեներալներ von der Goltz-ը և Liman von Sanders-ը, գլխաւորում էին զինուորական- mission-ը: Բեռլին-Բաղդադ երկաթգծի ծրագիրը սկսուեց իրականանալ և աւելի սերտացան այդ յարաբերութիւնները՝ մղելով Օսմանեան սուլթանութեանը մասնակցելու առաջին համաշխարհային պատերազմին, որպէս Գերմանիայի դաշնակից: Մինչեւ 1918թ. Թուրքիայում գերմանական սպաների թիւը հասաւ 800-ի, իսկ զինուորներինը 25,000-ի: Պատերազմը ցանկացած առիթն էր, որի ստուերի ներքոյ իրագործուեց երիտթուրքերի կողմից նախապէս ծրագրուած ցեղասպանութիւնը: Թուրքիայում ապրող քրիստոնեայ ազգերի՝ հայերի, ասորիների/արամէալեզու քրիստոնեաների և յոյների բնաջնջումը, որոնց կոտորածների և բռնատեղահանումների (Deportation) մասին Կ. Պոլսոյ կայսերական Գերմանիայի դեսպանատունը իր շուրջ 15 Օսմանեան սուլթանութեան քաղաքներում աշխատող հիւպատոսութիւններից լաւագոյնս տեղեակ էր, որն էլ իր հերթին փոխանցում էր Բեռլին: Բեռլինը չփորձեց կասեցնել կոտորածը, այլ գրաքննութիւն սահմանեց Հայոց կոտորածների մասին: 1915թ դեկտեմբեր 23-ին մամուլի գրաքննութիւնը դեռ աւելի խստացրեց, քանզի «Հայկական հարցի կապակցութեամբ նախընտրելի էր լռելը: Յատուկ գովասանքի արժանի չեն թուրք իշխանաւորները»[3]

Գրաքննութեան օրէնքին ենթարկուեց նաև Լեփսիուսի «Հայ ժողովրդի մահուան երթը» (1919, Փոթսդամ) գիրքը[4], որն հասցէագրուած էր խորհրդարանի (Ռայխսթագի) պատգամաւորներին, ինչպէս նաեւ Քառլ Լիբքնեխտի հարցադրումը՝ ուղղուած կառավարութեանը 1916-ի Յունուար ամսին, Հայոց զանգուածային կոտորածների

առնչութեամբ, որին խորհրդարանի նախագահը զրկեց ձայնից։

Դեսպան Փաուլ Գրաֆ Վոլֆ-Մեթերնիխը նամակով 1915-ի դեկտեմբերին դիմել էր հայերի բնաջնջման առթիւ Գերմանիայի արտգործնախարարութեանը։ Քանցլեր Թէոբալդ Ֆոն-Բեթման Հոլվեգը պատասխանել էր նրան. «Մեր նպատակն է Թուրքիան մինչև պատերազմի աւարտը պահել մեր կողքին, կարեւոր չէ թէ դրանից հայերը կը

կործանուեն, թէ ոչ...»[5]

Գերմանական ակադեմականները, դիւանագէտներն ու զինուորականները, աջակցում էին Մաքս ֆոն Օփենհայմին։ Թէպէտեւ չյաջողուեց նրանց իսլամներին, անգլիացիների և ֆրանսիացիների դէմ «մոբիլիզացնել», սակայն «Ջիհատ-հռչակումը» ունեցաւ թուրքերի, քուրդերի և չերքեզների մօտ մեծ արձագանք, որոնք քրիստոնեաների նկատմամբ յատուկ դաժանութիւն ցուցաբերեցին, յատկապէս ցեղասպանութեան և բռնատեղահանութիւնների ընթացքում։

Պատերազմը պարտուելուց յետոյ, երիտ-թուրք պարագլուխները, զինեղբայր Գերմանիայի օժանդակութեամբ, փախան Թուրքիայից և ապաստան գտան Բեռլինում։ Արտգործնախարարութիւնը դիմեց բոլոր միջոցների հովանաւորելու իր դաշնակից ոճրագործներին և մերժեց թուրք պատասխանատուներին յանձնել Կ. Պոլսոյ զինուորական ատեանին, որը Մեծն Բրիտանիայի ջանքերով և ճնշման հետեւանքով էր կեանքի կոչուել։ Այսպիսով Գերմանիան արգելք հանդիսացաւ, որպէսզի թուրք մեղսակիցները կրեն իրենց պատիժը, թէպէտեւ նրանք արդէն մահուան էին դատապարտուել զինուորական ատեանի կողմից (Թալեաթ, Ջեմալ, Էնուեր և Ազմի)։ Արտգործնախարարութիւնը ոչ մի ջանք չխնայեց, որպէսզի Թալեաթ փաշայի դատավարութիւնը չդառնայ քաղաքական ֆորում։ Դատը տեւեց միայն մէկուկէս օր, որպէսզի առիթ չտրուի բոլոր վկաներին ելոյթ ունենալու։ Սողոմոն Թէիլերեանը յայտարարուեց անմեղ և անհապաղ արտաքսուեց Գերմանիայից։

Արտգործնախարարութիւնը մոլորեցրեց նաև Յոհաննէս Լեփսիուսին, նրան յանձնելով կեղծուած փաստաթղթեր՝ «Գերմանիան և Հայաստանը 1914-1918, Փոթսդամ, 1919» գրքի համար, որպէսզի կայսերական Գերմանիան անմեղ ներկայացուի։ Նացիոնալ-սոցիալիստական Գերմանիայի օրոք Թալեաթի դին դեսպան Ֆրանց Ֆոն Փափենի (1945 որպէս պատերազմական ոճրագործ մահուան դատապարտուեց) ներկայութեամբ վերաթաղուեց Կ. Պոլսոյ ազատութեան բլուրի վրա (դեռ Ջեմալ Ազմին և Բէհաէդդին Շաքիրը թաղուած են Բեռլինի Քոլոմբիա-դամ թրքական գերեզմանոցում, «շէհիտլեր» մզկիթի հովանու ներքեւ)։

Գերմանիայի նացիոնալ-սոցիալիստական աշխատաւորների կուսակցութեան գաղափարախօս Ալֆրեդ Ռոզենբերգը 1926թ բնորոշել էր հայերին որպէս հրեաների

ռասայի (ցեղին) խորթ եղբայրը և արդարացրել երիտ-թուրքերի ոճրագործութիւնը[6]։ Ինչպէս նաեւ արգելել էր Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» վէպը։

Այսօրուայ Գերմանիան լրիւ անտեսում է ցեղասպանութիւնը, թէպէտեւ Գերմանիայի դաշնային հանրապետութիւնը (ԳԴՀ) ստորագրել է 1955-ի փետրուար 22-ին ՄԱԿ-ի ցեղասպանութեան կանխման և պատժման կոնվենցիան (1948-ի դեկտեմբերի 9-ին, որը ուժի մէջ է մտել 1951-ի յունուար 12-ին)։ Նոյն տարում էլ ԳԴՀ-ն դարձել է NATO-ի անդամ, յանձն առնելով թրքական բանակի կատարելագործումն ու նորագոյն զէնք ու զինամթերքի մատակարարումը։ 1996 թուականից առկայ է գերմանաթրքական մաքսային միութիւն և Գերմանիան Թուրքիայի ամենամեծ առեւտրական գործընկերն է։

Թուրքիայից գաղթած այսպէս կոչուած հիւր աշխատաւորները կազմում են ԳԴՀ-եան ամենամեծ իսլամական համայնքը, որոնց 2-րդ, 3-րդ սերունդները բոլոր գերմանական կուսակցութիւններում ակտիւ են և ունեն ազդեցութիւն գերմանական քաղաքական որոշումներում։ Նախկին քանցլեր Գերհարդ Շրոյդերը Թուրքիայի ԵՄ-ի անդամակցութեան ջատագովներից էր։ ԳԴՀ-ն որպէս Դեմոկրատական Հանրապետութիւն, անդամ է մարդու արժէքային համակարգ ներկայացնող ԵՄ համայնքին, այսուամենայնիւ, իր սոցիալ և քրիստոնեայ-դեմոկրատական Եւրոպայի պառլամենտի անդամները միաձայն դէմ քուէարկեցին 1987-ին հայոց ցեղասպանութեան ճանաչման բանաձևին։

Բունդեսթագը և Հայոց ցեղասպանութիւնը:

2000-ի ապրիլին հայկական, թրքական և գերմանական կազմակերպութիւնների ներկայացուցիչներ (Դոկտ. Թեսա Հոֆման, Ալի Էռթեմ և Դոկտ. Ժիրայր Քոչարեան) 16,000 ստորագրութիւններով դիմեցին Բունդեթագի խնդրագրերի գրասենեակին, ճանաչելու և դատապարտելու Հայոց ցեղասպանութիւնը, որին մէկ տարի յետոյ արձագանքեց Բունդսթագը, խուսափողական եղանակով։ Տեղեակ պահելով պաշտօնապէս Թուրքիայի կառավարութեանը խնդրագրի նպատակի մասին, սակայն խնդրարկուներին մատնանշել էր 2001թ գարնանը աշխատանքի սկսած թուրք-հայկական հաշտեցման յանձնախումբը՝ TARC-ը (Turkish-Armenian Reconcilation Commission), թէպէտեւ TARC-ը միջազգային անցումային արդարադատութեան կենտրոնին (International Center of Transitional Justice) յանձնած իրաւական գնահատականը (2003թ փետրուարին) հանգել էր եզրակացութեան, որ կարելի է ասել, ընդհանուր առմամբ եղելութիւնները համահունչ են ՄԱԿ-ի ցեղասպանութեան կոնվենցիայի բոլոր կէտերին[7] Այսուամենայնիւ գերմանական օրէնսդիր մարմինը և կառավարութիւնը նկատի չառան Անցումային Արդարադատութեան Դատարանի (ICTJ) իրաւական բնորոշումը։

Ցեղասպանութեան ճանաչման 2-րդ խնդրագիրը այս անգամ CDU/CSU խմբակցութեան կողմից ներկայացուեց Բունդսթագին փետրուար 2005-ին, երբ դեռ ընդդիմադիր էին, մի

ծանրաշարժ ծրագրային վերնագրով «Յիշողութիւն և յիշատակում (1915-16 թթ.) հայերի կոտորածները և վտարումները, Գերմանիան պիտի ունենայ իր ներդրումը թուրքերի և հայերի հաշտեցման հարցում"[8]

Գերմանիան ինքն իրեն համարում է որպէս ազնիւ միջնորդ, սակայն չունի սեփական դիրքորոշում, թէ արդեօք 1915-ի կոտորածները և վտարումները ցեղասպանութի՞ւն է, նկատի առնելով հայ-թրքական անիրական մերձեցումները, TARC (2000) և վերջապէս հայ-թրքական երկու արձանագրութիւնները (10.10.2009), (NZZ, 05.01.2012), որոնք կարճ ժամանակ յետոյ փաստեցին իրենց անարդիւնաւէտ լինելը և շատ թովիչ այսպէս կոչուած միջպետական երկխօսութիւնը, որը մնաց Գերմանիայի թրքական երեւակայական քաղաքականութեան սահմաններում, այսուհանդերձ Գերմանիան չփոխեց իր քաղաքական կողմնորոշումը։

100 տարի ցեղասպանութիւնից և բռնատեղահանումներից յետոյ, Թուրքիան և Գերմանիան վարում են նոյն արհամարհական քաղաքականութիւնը։ Գերմանիան, որը նպաստել է հայերի, ասորիների/արամէալեզու քրիստոնեաների, քրիստոնեայ արաբների, եզդիների և տերսիմցիների ցեղասպանութիւններին, հրաժարւում է դիրքորոշումից, որը ծայրահեղ ցաւալի է զոհերի ժառանգների համար և հարուածում է այն քրդերին և թուրքերին, որոնք պատասխանատուութիւն են ստանձնել ցեղասպանութեան ոճրագործութեան համար, քանզի թրքական պաշտօնական քաղաքականութիւնը, պատմութեան առումով, հովանաւորւում է Գերմանիայի կողմից։

Հայերի ցեղասպանութիւնն ու բռնատեղահանումները, որոնք չափանիշ են հանդիսացել ՄԱԿ-ի ցեղասպանութեան կանխման և պատժման կոնվենցիային, աղճատել որպէս «ջարդ և արտաքսում», կազմում է ԳԴՀ-ի արտաքին գործօց նախարարութեան բոլոր յայտարարութիւնների հիմքը, որը կառավարութեան անունից որպէս պատասխան տրւում է ընդդիմադիր կուսակցութիւններին, երբ նրանք Բունդեսթագում Հայոց ցեղասպանութեան հարցն են բարձրացնում։

Միքայէլ Հէզէմանը 2015 թ. սեպտեմբերի իր յօդուածում գրում է, «Երբ Պապ Ֆրանսիսկուսը այս տարուայ ապրիլի 12-ին Հայոց երկու կաթողիկոսների ներկայութեամբ Ս. Պետրոս կաթողիկէում պատարագով ոգեկոչում էր Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցը, Գերմանիայի դեսպան Տիկին Անէթէ Շաւանը ցուցադրաբար հեռու մնաց վատիկանեան պատարագից։ Տիկին Մերքելը այդ դէպքից առաջ յայտարարել էր՝ «Հայոց ցեղասպանութիւնը Հայաստանի և Թուրքիայի միջեւ երկկողմ խնդիր է», ու հերքել էր գերմանական որեւէ մեղսակցութիւն։ Արտգործնախարար Շթայնմայերը յետ չէր մնացել իր քանցլերից և նշել էր. «Երկու ազգերի բուն խնդիրը իրար հետ չխօսելն է»։ Իսկ պետ-նախարար Միխայել Ռոթը սեփականացնելով Անկարայի դիրքորոշումը, յայտարարեց իմ բողոք-նամակին առ ի պատասխան, գրում է Հէզէմանը, «Սկզբում, իհարկէ, Էրդողանի կողմից կեանքի կոչուած պատմաբանների յանձնախումբը պիտի որոշի, թե ի՞նչ է իրապէս տեղի

ունեցել 1915-ին»9:

Ինչպէս սկզբում ակնարկեցինք, 2015-ի Ապրիլի 24-ի յուզիչ ճառերից յետոյ որոշուեց, որ Բունդսթագի արտաքին յարաբերութիւնների յանձնախումբը բանաձեւ մշակի Բուդեսթագի արձակուրդներից առաջ, և յետոյ էլ յետաձգուեց արձակուրդներից յետոյ, որը և առայսօր տեղի չի ունեցել: Ուլա Ելփքինը10 իր Սեպտեմբեր 13-ի, Ձմիւռնիայի ողբերգութեան՝ հայերի, յոյների, Ասորի/ արամէալեզու քրիստոնեաների միասնական յուշահամալիրի բացման օրուայ ճառում, որը տեղի ունեցաւ Շառլոթենբուրգի աւետարանական պանթէոնում, այսպէս յայտարարեց. «Հնարավոր է ցեղասպանութեան հարցը 2016-ի Ապրիլ 24-ին մտնի Բունդեսթագի օրակարգ»:

2015-ին Գերմանիայում ցեղասպանութեան թեմայով հրատարակուած գրքեր և պարբերականներ.

1.
Kirsten Staut: Strategien des Gehörwerdens, Transcript-Verlag, 2015
Pogrom-100 Jahre Völkermord, 100 Jahre leugnen, 6/2014
Reinhard Pohl: Völkermord, Heft 69, Magazine Verlag, Kiel, 2015
Jürgen Gottschlich: Beihilfe zum Völkermord, C.links Verlag, 2015
Mihran Dabag, Kristin Platt: Verlust und Vermächtnis Überlebende des Genozids an den Armeniern erinnern sich, Verlag Ferdinand Schönningh, 2015
Kai Seyffarth: Entscheidung in Aleppo-Walter Rössler (1871-1929): Helfer der Verfolgten Armenier-Eine Biografie, Donat Verlag, Bremen, 2015
Yetvart Ficicyan (Hg): Der Völkermord an den Armeniern im Spiegel der deutschsprachigen Tagespresse 1912-1922
Michael Hesemann: Völkermord an den Armeniern, Herbig Verlag, München, 2015
Rafaela Thoumassian: Werwolf oder Taube, Norderstedt: Books in Demand GmbH (BoD), Oktober 2015

2.Henry M. Broder, die Welt 27.04.2015 և
3.Reinhard Pohl, Völkermord, Deutschland und die Welt, Heft 69, Seite12-13
4.Johannes Lepsius: Der Todesgang des armenischen Volkes, Potsdam, 1919, Tempelverein
5.Archiv des Auswärtigen Amtes, R 14089; A36184; pr.15.12.1915, Bericht DuA Dok.209, Zitiert nach Gust, Völkermord, Springe 2005, Seite 394-395
6. Zeitschrift: Die Weltkampf, 1926
7.Vgl. den Text des Gutachtens zur «Anwendbarkeit» der UN-Konvention über die Bestrafung und Verhütung von Völkermord auf Ereignisse vom Beginn des 20. Jhs.'' S. 17, aut http://www.1.american.edu/cgp/TARC/ICTJ%20Memorandum%20Feb.%2003.pdf
8.http:www.aga-online.org/dokuments/attachments/Bundestagresolution.pdf
9.Michael Hesemann: Islam-Christentum 2015

10.Ձախերի կուսակցութեան բունդեսթագի պատգամաւոր

Ձեկոյցը՝ "Գերմանիայի արտաքին գործոց նախարարութեան դիրքորոշումը Հայոց և միւս քրիստոնեայ ազգերի ցեղասպանութեան նկատմամբ՝ անցեալն ու ներկան" ներկայացուել է միջազգային գիտաժողովում ”Հայոց ցեղասպանութեան-100. ճանաչումից՝ հատուցում”, Երևան, 2015թ. Հոկտ.15-16-ը: